

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ

51^{րդ} ՏԱՐԻ, ԹԻԻ 7

(ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ)

16 ՓԵՏՐՎԱՐ 1902

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մասիս այս թիւին մէջ լայն տեղ մը տրուած է

ԲՕԼ ՊՈՒՐԺԷԻ ընդարձակ մէկ նորավէպին

ԱՆԱՐԳՈՒԱԾԸ (L'outragé)

զուտ գրական գրուածք մը, — սիրոյ ու նախանձի հոգեբանութիւն, — զոր
թարգմանած է Օ. ՉԻՖԹԷ ՍԱՐԱՅ

Թերթին միւս նիւթերն են՝

ՀԻԻԿՕ ԵՒ ՉՕԼԱ. Բաղդասական տեսութիւն մը. ԱՐՇԱՄ

ՎԻՇՏ (Բերքուած) ԱՐՏԱՇԷՍ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

ԿԷՍ-ԲԺՇԿԱԿԱՆ (Հանրային առողջութիւնը)

ՏՈՒԹ. ՅՈՎԱ. Տ. ՍՏԵՓԱՆԵԱՆ

ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ՇԱԲԱԹԸ

Մասիս շաբաթաբերքի տարեկան բաժանորդագիւնն է Կ. Պոլսոյ համար ԲԱՌՍՈՒՆ
դր. եւ գաւառներուն համար ՅԻՍՈՒՆ դր., կանխիկ վճարելի: Արտասահման 12 ֆրանկ
կամ 5 բուլղի: Թղթասարական ծախքը խմբագրութեան վրայ է: Վեցամսեայ կամ ե-
ռամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր: Բաժանորդագրութիւնները կը սկսին ամէն
ամսոյ մէկէն: Մասիս հրատարակ կ'ելլէ ամէն շաբաթ առտու, եւ կը գտնուի Բերայի բոլոր
ծխականատներուն ու Պահչե-Գաբուի ջրավանդներուն խանութները, ինչպէս նաեւ Ղալա-
թիոյ, Պոլսոյ եւ բոլոր արուարձաններու լրագրականատներուն հոյ:

Ձեռքէ կը ծախուի ՀԱՏԸ 40 ՓԱՐԱՅԻ

ՀԱՍՏԷ

دروغليده غلطهده «ماسيس» غزتمسى ادارهسى

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՄԱՍԻՍ» Ի

Կ. Պոլիս, Ղալաթիա, Նորասունկեան խան

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople

ՏՈՔԹ. Ե. ՄԱՍԻՍ

ԲԵՐԱ, ԹԱԳՍԻՍ ՓՈՂՈՑ, ԹԻԻ 15

Բացի սովորական ներքին հիւանդութիւններէ՝ կը դարձնէ մասնաւորաբար, նոր մեթոտներով եւ խնամով ստամոքսի, աղեաց, միզական ճարտաներու հիւանդութիւնները, ջղաշին սխարոթիւնները, գաղիական ախտերը (սիֆիլիս եւրո) եւ մորթի հիւանդութիւնները:

Հիւանդ կ'ընդունի ամէն օր կէս օրէ վերջը:

ԱՏՍՄՆԱԲՈՅԺ

ՏՈՔԹ. Գ. ԳԱՐՐԻԵԼԵԱՆ

ԲԵՐԱ, ՄԵԾ ՓՈՂՈՑ, ԹԻԻ 200

Կարաւ-Սերայի Լիւսին դէմ

ԳԵ. ՆԵ. ՇՐ. օրերը առաւօտեան կանուխէն մինչեւ իրիկուան ժ. 11 1/2

ԲԵ. ԴԵ. Ուր. օրերը 6 եւ մինչեւ 11 1/2

Կիրակի օրերը ժամադրութեամբ

Ա Ր Ի Ս ԵՒ ԸՆԿ


ՇՈԳԵՇԱՐԺ ԳՈՐԾԱՏՈՒՆ

ՀՈՏԵՂԻՆԱՅ ԵՒ ՕՃԱՌԻ

Հիմնեալ 1889 ին

Կ. ՊՈԼԻՍ

ԹԱՀՏԱՔԱԼԷ



Վաճառքի



Արուստագիրտական վերջին կտարեւազործութեամբ եւ առաջնակարգ մեքենաներով օժտեալ եւ եւրոպացի վարպետի մը հսկողութեան ներքեւ կ'արտադրէ ամենանոր հոտեղէններ ինչպէս նաեւ թուալէթի հոտաւէտ եւ լուացքի պարզ օճառներ:

Տեսակի ազնուութեան մասին եւրոպական ամենամեծ գործարաններու ապրանքի դէմ մրցելու առաւելութեան կը միացնէ գիններու գերազանց աժանութիւնը: Փախաքողներուն՝ քաթալօկը ձրի կը զրկուի:

Մեծաքանակ գնում՝ ընել ուղղները կրնան զիմել Կ. Պոլսոյ մէջ ՕՐՕՍՏԻ ՊԱՔԵՒԻ. ԻՆՃԻՃԻՆԱՆ ՈՐԴԻՐ վաճառատուները, իսկ գաւառներու եւ օտար երկիրներու մէջ զիմել գործակալութեանց որ ի ստորեւ, ուր պիտի գտնեն նմոյշներու ցուցադրութիւն մը՝ պէտք եղած բոլոր տեղեկութիւններով:

ԲԱՐԻՉ.—ՊՊ. Լաքառիւն Որդի եւ Ընկ. 28 Ռիւ Շաբուէօն:

ՊՈՄՊԱՅ.—ՊՊ. Ապքար եւ Ընկ.

ԱՂԵՔՍԱՆՐԻԱ.—Պ. Մ. Գալֆանան

ԴԱՀԻԲ.—Պ. Հ. Ռոզաբայ.

ՌՈՒՍՃՈՒԿ.—Պ. Պ. Կ. Ինճիճեան որդիք.

ՎԱԲՆԱ.—Պ. Կեռոն Արտիքի.

ԻՋՄԻՏ.—Պ. Յակոբ՝ Մոմճեան

ԶՄԻՌՆԻԱ.—Պ. Հայրիի Վառնիկ.

ՍԵԼԱՆԻԿ.—Պ. Տիւֆէրնանօկ.

ԻՍԿԻԻԿ.—Պ. Մ. Քափուանօ.

ՊԵՐՈՒԹ.—Պ. Ֆրանքի Շիֆֆեր.

ՍԱՄՍՈՆ.—Պ. Պ. Պետրոսեան եղբարք.

ՏՐԱՊԻԶՈՆ.—Պ. Աքիս Կ. Ինճիճեան.

ՍԵՐԱՍՏԻԱ.—Պ. Պ. Վ. Ս. Մեծատուրեան

ՌՈՏՈՒՍ.—Պ. Յակոբ Բոզաւալ

ՄԱՍԻՆ

51^{րդ} ՏԱՐԻ

— 16 ՓԵՏՐՎԱՐ 1902 —

ԹԻԻ 7

ՀԻՒԿՕ ԵՒ ԶՕԼԱ

Մեծ ազգ մը՝ Գաղղիա՝ այսօր կը տօնէ իր մեծ բանաստեղծին ծննդեան հարիւրամեակը։ Հոս՝ փոքր հասարակութիւն մը՝ իր փոքր մէկ օրագրին հաստատման յիսնամեակը հռչակեց երէկ։ Մէկը՝ ճօխ հանդէսով կը կատարուի, նշանաւոր անձնաւորութիւններու մասնակցութեամբ, որուն համար խրախճութիւններ, սեղաններ, ճառեր հարկաւոր են, եւ ի՞նչ կ'ըսեմ, մետադէ արձան կը կանգնուի։ Միւսը՝ անշուք յիշատակութեամբ մը կատարուեցաւ, համեստ խմբագրականով մը նուիրագործուեցաւ, աճապարանքով կարգաւորած աղօթքի մը պէս՝ աղքատ ծնողաց երախային գլխուն վրայ, մկրտութեան աւազանին առջեւ։

Թերեւս շատեր արտառոց գտնային քաղաքացիութիւն մը որոնելու գործը այդ երկու եղելութիւններուն միջեւ, եւ նոյն իսկ ծաղրելի՝ եթէ չուզէին վայրկեան մը նկատել թէ աշխարհիս վրայ անսահմանի եւ չափելիի գաղափարները անգամ յարաբերական են։ Ծիծաղելի պիտի ըլլար այն գիտունը՝ որ հաւտար տիեզերական մեծ զանգուածներուն միայն, եւ անկատ թողուր շամանդաղները, հիւլէները, նախանիւթը՝ որոնք կեանքով կ'ապրին, կեանքով կ'աճին եւ կեանք կ'արտադրեն։

Երեսն տարի առաջ եւ յիսուն՝ տարի վերջը. աւասիկ անջրպետ մը որուն մէջ կը պարփակուի գրական այն մղումը՝ զոր ստացան հայ օրագրութիւնը եւ մատենագրութիւնը, գլխաւորաբար գաղղիական լեզուն

եւ գաղղիական ճաշակին ազդեցութեանը տակ։

Երեսն տարի առաջ՝ Զօլաէն, եւ յիսուն տարի վերջը՝ Մասխիսի հաստատուելէն։

Ոչ ոք պիտի սպասէր կարդալ «աւուր պատշաճի» յօդուածի մը մէջ գաղղիական մատենագրութեան ընաշրջման երեւոյթներուն պատմութիւնը։ Կան սակայն դիտուած եւ ճշմարիտ երեւոյթներ՝ զորս ճշդիւ ներելի է, եթէ ուզուէր քաղղատութեան եզրեր հաստատել օտարին մտաւորական յառաջդիմութիւններուն եւ, մեր տոնմային սահմանին մէջ, այդ զարգացման հակազդեցութեանը վրայ։

Հայը՝ որ իսկապէս բանաստեղծ ցեղերու տմէն յատկութիւնները սենի, որուն երեւակայութիւնը զարբերով ամբարձաւ եկեղեցական երգեցողութեան սրտառուչ չեղերովը, շարականներու եւ փառաբանութիւններու, օրհնութիւններու եւ ովսանաններու երկնային իտէալովը անգայտացու աւ աննիւթացաւ, որ մը յանկարծ ազդուեցաւ քնարերգակ բանաստեղծի մը քաղցրահնչիւն խաղերէն՝ որոնք ամբողջ մարդկութեան ջիւղերը կը յուզէին։ Եւ ինքզինքը romantique գտաւ։ Այդ օրը՝ հայ գրագէտը կերպարանափոխ եղաւ։ Իր խորհելու եղանակը փոխուեցաւ եւ գրական ճաշակը այլալեցաւ։ Սէրը եղաւ հայ բանաստեղծի միակ նպատակակէտը. եթէ յարատեւ տենջաց լաւագոյն գրականութեան մը, նախընտրեց նաեւ հիւանդոտ վրձակը, ծիւրախտաւորի խռնջիւնը։

Աւատիկ ինչ ազդեցութիւններու տակ ծնաւ Մասիս, Զօլաէն յիսուն տարի առաջ :

Վիպականութեան հովը փչեց եւ անցաւ մեր վրայէն ալ : Ի՞նչ ազդեցութիւն թողուց մեր վրայ, ոտանաւորի եւ գրագիտութեան մէջ գրոշմած ձեւի, ոճի զօրաւոր հետքերէն դատ :

Ոչինչ, եթէ ոչ գատարկ հռետորութիւն մը : Հիւկօ իր ծրագիրը պարզած է իր համբաւաւոր Յառաջադրանքին մէջ. Գոսմուէլի սկիզբը զետեղուած, ուր կը յայտարարէր. — «Արդի բանաստեղծութիւնը պիտի զգայ թէ արարչագործութեան մէջ ամէն բան «մարդիօրէն գեղեցիկ չէ, թէ տգեղ կը «գտնուի գեղեցիկին քովը, ձեւագեղձը՝ շը-«նորհալիին քով, չարը բարիին հետ, ստուե-«րը՝ լոյսին հետ » :

Հիւկոյի նպատակն էր «խառնել առանց չփոթելու, մարմինը՝ հոգիին, անասունը՝ իմացականութեան » :

Բայց՝ դժբաղդարար՝ այդ խառնուրդները ինք կը ստեղծէր երեւակայութեամբ, չափազանցելով իրողութիւնները, առանց գիտական քննութեան, առանց նկատելու միջավայրի ազդեցութիւնները, ժառանգականութեան անխախտ երեւոյթները, փնտռելով մարմինը հոս, հոգին հոն, անասունը մէկ երկրէն առնելով, եւ խելքը ուրիշ երկրէ : Որով այս ամէն արտագրութիւնները տարբալուծական փորձերու հանգամանք կը ստանան, հանդիսականը կը վարանի, որոշ եղբակացութեան չի համար, բարոյականութիւն կը գտնէ հոն՝ ուր կեղտոտ արարքներ միայն կային, կ'ամբառնայ երեւակայութեամբ, կապոյտին մէջ կ'ապրի : Որով ներքի պիտի ըլլար կրկնել Զօլաի հետ թէ. — «Ճշմարիտ «սպականիչները՝ հռետորականներն են, եւ «թէ մարդ անհրաժեշտ կերպով ցեխին մէջ «կ'իյնայ՝ զէպի գաղափարականը բրած իւ-«րաքանչիւր ոստումէն ետքը » :

Հետեւաբար իմաստասիրութեան եւ գաստիարակութեան տեսակէտով՝ Հայը քիչ բան սորվեցաւ Հիւկոյէն, իսկ Գաղղիացին չի կրցաւ հետեւիլ անոր աւանդութիւններուն, առնաց *mélodrame*ի մէջ իյնալու : Մեր բա-

նաստեղծները միայն օգտուեցան իրմէ — որչափ որ կրնային — արտաքին ձեւի եւ մեքենական ոտանաւորի տեսակէտով :

Պիտի մաղթէի որ Մասիսի յիսնամեակին տարեդարձը վերջապէս հաստատուած տեսնէր մեր մէջ Դրական Դրականութիւնը, որոշ եւ յստակ սկզբունքներու յարգը, քննական եւ գիտական ոգին, հետազօտութեան եւ ուսման մէթոտը :

Ըսել չէ թէ բանաստեղծի պէտք չունինք, բայց ասոնք կը յարգենք միայն երբ կրնան հաճելի ըլլալ մեր զգացումներուն, զուարթացնել զմեզ կամ որորեւ զմեզ՝ մեր յոգնութեան եւ մեղամտալքութեան ժամերուն մէջ, աւելցնելու համար մեր եռանդը աւելի դրական աշխատութիւններու մէջ :

Եւրոպոյի մատենագիրները՝ մեզի նկատմամբ՝ կը նմանին երկնային հեռաւոր, շատ հեռաւոր մարմիններու՝ որոնց լոյսը գեռ կը հասնի, հակառակ այդ գունատերուն տարիներ առաջ մարած ըլլալուն : Թէեւ Հիւկոյի լոյսը բողբոլին մարած չէ, բայց Աստղ Պրիստի գիտողութեանը համեմատ, «իւր վերջնական ճառագայթումին մէջ կը բարձրանայ այդ տրեւը » :

Լուսատու նոր մարմիններ ծնան հոն՝ տարիներէ ի վեր, եւ ասոնց ցոլքը մենք նոր կը նշմարենք : Հարկ էր որ Զօհրապ առաջին կորովի քայլը առնողը ըլլար բացուած նոր շաղկին մէջ, եւ մեր «հին դպրոց»ի ընթերցողներուն գալթակցութիւն տար՝ իր Փոքորշուովը եւ Փոքսաշուովը :

Քանի որ մեր բանաստեղծները լուսնիկն *sérenades* երգելէ, մայրական սիրով հիւանդանալէ, կամ խաբուած սիրահարի գանգատներով զմեզ առաւտիացնելէ ուրիշ բան չեն գիտեր, առանց վերապահութեան կ'ընդգրկեմ նորաւէպը, փորձառական եւ քննական վէպը որ պիտի վերկենդանացնէ մեր լեզուն, մասնանիշ պիտի ընէ մեր թեքութիւնները եւ մոլութիւնները, եւ իրական յառաջագիմութիւն պիտի տայ մեր զբաղանութեան :

Հայր մը որ ուրիշներու կիներուն եւ աղջիկներուն առեւանգումին գործիք կ'ըլլայ՝

եւ մայր մը՝ որ իր տղուն ցանկութիւններուն զո՛ւ կընէ պաշտպանութեան կարօտ գաւառացի ավախինը այդ երկու նկարագիրներէն որոշ ու յատակը՝ Մարիամ Հանըմինն է։ Առաջինին պէս ճապարակ տրուող մը երեւակայութեամբ կը ստեղծուի, իսկ երկրորդ տիպարը՝ «ապրուած» օրինակ մըն է, ինչպէս կըսուի հիմայ սովորաբար։

Այդ Մարիամ Հանըմին նմանները թերեւս իւրաքանչիւր ոք գիտած ըլլար երբեմնի միջավայրներու մէջ, զլիաւորաբար ամիրայական ազնուատոհմներու վերջին շառաւիղներուն մէջ։

Այդ Մարիամ Հանըմը շատ բան տեսած է իր էրկէն, էրկանը եղբայրներէն շատ բան լսած է նախորդ ազգականներուն կեանքէն, այնպէս որ հասած է վերջապէս ներողամիտ փիլիսոփայութեան մը՝ ամէն բան քաղարկելու, եւ նոյն իսկ ինքնասէր հաճոյք մը փնտռելու իր տղուն, իր չրջականներուն կեանքին մանրամասնութիւններուն մէջ, նպաստելով մէկուն ցանկութիւններուն, քաջութիւնը միւսին քմահաճոյքը, եւ այս ամէնքը՝ կեղծաւոր, շահախնդիր ազնուականութեան մը գիմակին առկա։

Որչա՛փ բազմաթիւ են հետաքրքրական տիպարները մեր տահմային միջավայրին մէջ, իրենց բարի եւ յոռի կողմերովը, կորովի ձիւքերովը եւ ակար բնաւորութիւններովը։ Ինչ պէտք կայ երթալ անցեալին մէջ փնտռել վէպի հերոսներ, ամէն օր, մեր ամէն քայլին կը քսուինք կ'անցնինք կեանքի դերասաններու քովէն, եւ չենք գիտեր ուսումնասիրել անոնց հոգեբանութիւնը։

Թո՛ղ խղճահարները գայթակղին, թո՛ղ թափեն իրենց հռետորական ամբողջ ոյժը՝ պաշտպանելու համար յոռի բարքերը, չի քննելու, չուսումնասիրելու կեղծաւոր բարոյականութիւնը։ Ոչ ոք պիտի ազգուի այդ աղմուկներէն, եւ գիտութիւնը պիտի չի չեղի իր ճամբէն, քանի որ գրականութեան հիմքին ալ գիտութեան վրայ հաստատուած են այսօր, եւ ո՛չ երեւակայութեան վրայ։

Զօրա՛ն յիտուն տարի առաջ ծնած roman-tismը ապշեցուց ամբողջ աշխարհ՝ որ այսօր անտարբեր կը մնայ անոր ցնորական հրաշալիքներուն առջեւ։

Մաւխի հաստատուելէն յիտուն տարի վերջը՝ իրապաշտական գրականութիւնը զգալի կընէ ինքզինքը մեր մէջ։

Այս է եղելութիւնը՝ զոր հաստատել կուգէի, եւ որուն համար կը խնդակցիմ։

10/23 Փետր. 1902

ԱՐՇԱՄ

ԿԵՍ—ԲԺՇԿԱԿԱՆ

—>❧<—

ՀԱՆՐԱՅԻՆ ԱՌՈՂՋՈՒԹԻՒՆԸ

Քաղաքագետութիւնը վերջերս ծանուցագիր մը յղած էր Հայ եւ Յոյն Պատրիարքարանները՝ կարմրախաւէ, հարսանիքէ ու նման օրինակ տարափոխիկ հիւանդութիւններէ մեռնողներու մասին կարգ մը խիստ բանաւոր դիտողութիւններով, ինչպէս օրաթերթերը հրատարակեցին։

Հանրային առողջութեան տեսակէտով շատ կարեւոր քայլ մըն է որ կ'անուրի ասով։ Թէ թէեւ կարգացինք թէ Պատրիարքարաններն ալ իրենց կարգին Թաղական Խորհուրդներուն զրկեր են յատուկ չրջաբերականներ, սակայն ժողովուրդին ամէն խաւերուն մէջ այդ մասին արմատացած կարգ մը սովորութիւնները արմատախիլ ընելու համար՝ քիչ մըն ալ առողջապահական ծանօթութիւն աւելորդ չէ բժիշկներուն կողմէ։

Կրնանք բացարձակապէս յայտարարել թէ կանխազգուշական միջոցներուն երեքը աւանջ չի կախեր հանրութիւնը, կամ գէթ անոր մեծ մասը։ Տարափոխիկ հիւանդութիւններու մասին այնքան ապշեցուցիչ տգիտութիւն եւ այնքան ողբալի անտարբերութիւն կը ցուցունէ ժողովուրդը, որ շատ անգամ բժիշկներէ բղխած յորդոր ու խրատ մազի չափ օգուտ չեն արտադրեր։

Ամէն բանէ առաջ հասկցուելու է իմաստը եւ գերազանցօրէն ճշմարիտ իմաստը սա բժշկական պատուէրին թէ՛ «արգելումը դարմանումէն աւելի աղէկ է»։ Այսինքն թէ՛ աւելի զիւրին է արգելել հիւանդութիւն մը քան դարմանել նոյն

հիւանդութիւնը . թէ՛ աւելի աժան եւ օգտակար կ'ըլլայ սպառնացող ախտի մը առջեւ կանուխէն պատուար մը կանգնել քան ջանալ զայն կասեցունել կամ ջնջել՝ հիմ բռնելէն , ճամբայ առնելէն ետքը :

Ու ասոր համոզուելու համար անպատճառ բժիշկ մը ըլլալ պէտք չէ : Առէ՛ք եղանակին է՛ն սովորական մէկ հիւանդութիւնը՝ հարբուխը . կլիմայի յարափոփոխ վիճակներուն հետ որ եւ է մարդ պզտիկ ջանքով մը կրնայ պաշտպանել ինքզինքը՝ ցրտառութեան դէմ , որ կրնայ սակայն որ եւ է ատեն փոխուիլ թոքաոտապի կամ ուրիշ ծանրակշիռ հիւանդութեան մը : Մարդը գիտէ այս ամէնը , սակայն անհագութեամբ , օրին մէկը՝ առանց ձմեռուան հաստ վերարկուն շուկայ կ'երթայ , ուրիշ խօսքով , ականջ չի դնել կանխազգուշական ամենաթեթեւ աղբարարութեան մը , ու իրիկունը տուն դարձած պահուն՝ վստակած ցրտառութենէն անկողին կ'իյնայ , ու ան ատեն հիւանդութիւնն ալ ականջ չի դնել իր աղաչանքներուն կամ արտունջներուն :

Կանխազգուշական միջոցները դիւրամատչելի են . Ժողովուրդին սովորութիւնը սակայն նախ տեղի տալու է առողջապահական սկզբունքներու : Ու գործը ինքնին կը կատարուի : «Մենք մեր հայրերէն ասանկ անսեր ենք՝ ասանկ պիտի երթանք» ի մասսով պարապ խօսքեր հանրութեան բերնին մէջ յանկերգի ձեւ , ու նուիրագործուած ձեւ մը առած են , ու կը նետունին բժշկին երեսն ի վեր , երբ սա առողջապահական խրատ մը տալ յանգրի տարափոխիկ հիւանդութիւններու ժամանակ :

Կանխազգուշական միջոցներու համար դրամականը մեծ նշանակութիւն մը չի կրնար ունենալ . քանզի , ինչպէս դիտել տուի արդէն , դիւրամատչելի են անոնք : Կը կարծեմ սակայն թէ այս պարագան ինքնին աննպաստ արդիւնք մը առաջ կը բերէ . եւ սապէս : Հանրութիւնը գոհ կ'ըլլայ սուղ բաներէ , կամ ըսենք , յանձնարարուած միջոցին ու քաղուելիք արդիւնքին վրայ խորհելէ աւելի կը կարծէ թէ աժան գինով , դիւրամատչելի պայմաններով կանխարգելիչ միջոցները՝ իրեն

սուղի չեն նստիր , ուստի եւ կարեւորութիւն ու հաւատք չընծայեր անոնց : Հիւանդութենէ բռնուելէ վերջ սակայն յանձնարարէ՛ զեզ ու դարման , եւ անոնք ալ ամէնէն ոռղնոց տեսակէն , եւ կ'ընդունուին առանց վարանումի , այն համոզումով թէ գեղերուն գինը ուղիղ կը համեմատի անոնցմէ քաղուելիք օգուտին :

Տարակոյս չի կայ նոյն ատեն թէ կան նաեւ մարդիկ , որոնք դրամի ու աշխատանքի անպէտ վատնում կը սեպեն տռոջապահական պայմաններու համակերպիլը : Այս ալ առաջինէն նուազ խզճալի տրամաբանութիւն մը չէ՛ սակայն : Պարզ բաղդատութեամբ մը բացատրեմ միաքս : Հրդեհի դէմ ապահովագրական ընկերութիւններ կան որոնց կը վճարեն տարեկան սա՛ կամ նա՛ չափ պզտիկ գումար մը , լո՛կ իբրեւ նախզգուշութիւն : Եթէ պատահի որ չէնքը այրի , չէնքին տէրը իր այդ տարեկան պզտիկ վճարումներուն չնորհիւ կը ստանայ չնորհքով գումար մը : Ո՞վ պիտի ուզէ ըսել թէ՛ այդ մարդուն ըրածը արամարութիւն էր , թէ՛ իր տարիէ տարի տուած դրամը , կոտորած նախզգուշութիւնը անպէտ ու անօգուտ բան մըն էր :

Եւ սակայն առողջապահական նախզգուշական միջոցներու համար տրուած դրամը եւ տարուած հոգածութիւնը աւելի անհրաժեշտ ու պիտանի համարուելու են , քանզի անոնք մարդուն մարմնին համար են ուղղակի՝ Բուական է որ ապագային խելճութիւնը , ետքէն գալիք հիւանդութեան մը ահաւորութիւնը միտք պահէ մարդ , ու ան ատեն ապահովաբար ինքնայոժար պիտի համակերպի ու յանձնառու պիտի ըլլայ կանխաւ ըլլալիք կարգ մը աննշան ծախքերու :

Փոխանակ փոխանցիկ . հիւանդութիւններու վրայ ընդհանուր կերպով խօսելու , առնենք , իրեւ օրինակ , ակնարկուած ծանուցագրին մէջ յիշուած մէկ հիւանդութիւնը՝ կարմրախտը : Կարմրախտէ բռնուած տան մէջ գտնուողները՝ անդուշութեամբ կը պլչկեն զիրենք եւ ուրիշները՝ Հիւանդին քով կը մտնեն կ'ելլեն , առանց երբեք խորհելու թէ ատանկով նախ իրենք իրենց վրայ կը հրաւիրեն նոյն հիւանդութիւնը :

նը եւ հաքն ալ կը փոխադրեն զայն ուրիշ տեղեր , ուր կ'այցելեն : Ծնողքներ գիտեմ որ այդ ախտէն բռնուած իրենց մէկ զաւակը ազատելու , բժշկելու համար յանձն կ'առնեն ինչ ամէն բան ու ամէն ծախք , բայց լնաւ հոգ չեն տանիր նոյն հիւանդութենէն պաշտպանել տունին մնացած անդամները : Ասանկ պարագաներու տակ մանաւանդ մեր մէջ խիստ չնասկար սովորութիւններէն մէկն է հիւանդին այցելել ու մամբարով անոր քով մնալը : Ոճիր մըն է այս , ոճիր մըն է այսինչ կարմրախտաւորին քով երթալ ու տանիլ հիւանդութիւնը այնինչին : Ընկերսիրութիւն ըսուած բանը կը հասկնամ . բայց ինչպէս որ մեր մէջէ էն տխմարն իսկ իր մէկ բարեկամին կամ ազգականին այրած տունէն իր

տունը չի' փոխադրեր ու չի' բռնկցուներ բարեկամութեան կամ ընկերսիրութեան համար , անսակ ալ նոյն չքմեղանքով խելքը զուխը մէկը երբեք պարտաւոր չէ կարմրախտով վարակել իր տունը , որովհետեւ իր մէկ ազգականին կամ բարեկամին տունը կարմրախտի զոհ մը կայ :

Տարափոխիկ հիւանդութիւններու առաջը առնելու միակ կերպն է կանխազգուշական մեթոտներուն , ու ողջպահիկ կանոններուն կարեւորութիւն ընծայելը : Ժողովուրդը սորվելու է յարգել այս մասին իրեն տրուած խրատները , ինչպէս են յօդուածիս առիթ տուող պաշտօնագրին մէջ յիշուածները :

ՏՈՒԹ. ՅՈՎՍ. Յ. ՍՏԵՓԱՆԵԱՆ



Հայիին մեջ մեր վայրկեան մը մնացի՜ր
Նրկասելէ յետոյ պահկես առանձին ,
Տրսմութիւնը կրգգամ անգուք ու անծիր
Աղւոր սրդայ մը չըլլալուս կասկածին :

Զի միամիտ , յիմար բաղձանքն ես ունիմ
Վայելելու ձեր սերն անկուտ , անյասակ ,
Եւ դուք , — անգո՛ւք քմահանոյք , ո՛վ ճիկին ,
Համբաւն ունիք աղւոր սրդոց սարփանքին :

Չունի արժեք ձեզի համար , ո՛վ անգուք ,
Բանաստեղծի սիրուած անունն իմ խեղճուկ ,
Բարոյական յասկութիւններ ձեզ ի՛նչ փոյթ .
Ձեր սիրոյն դեմ քերքուածներ չե՛ք փնտռեր դուք :

Ու կը խորհիմ քե գիծերու չափական
Դիպումածաւոր դաւնակութեան մը խառնուրդ
Գուցէ ընե՛ք զիս ձեր սիրոյ առարկան .
Դեղեցկութեան ըլլալիք զոհն անխորհուրդ :

Սրտիս ամբողջ պատշաւումնք անպատու
Դեմքիս վրայ չը դընելու մորմոման
Կուրճիս տակը խոր ցաւն ունիմ ես տրտմ ,
Վիշտք՝ աղւոր մը չըլլալուն վիշտն անհուն :

Ու նայուածքի տարբեր նաճանչ մը կախարդ ,
Եւ ժպիտի տարբեր ծաղիկ մը փայլուն ,
Պիտի տայի՛ն ինծի վայելք զուարթ՝
Ձեռն , ճիկի՛ն , առատօրէն սիրուելուն . . . :

ԱՐՏԱՇԷՍ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

Ա Ն Ա Ր Գ Ո Ւ Ա Ծ Ը

(ՆՈՐԱՎԷՊ)

Ա.

Երբ գերեզմանապահը երկաթէ դռնակը
կը գոցէր, պզտիկ մատուռին՝ որուն վրայ,
Մաշօ-Կօնթիէնէրու ընտանիքին յատուկ բա-
ռերը կը կարգացուէին, Միշէլ վարկեան մը
կանգ առաւ գիտելու համար Բասիի մեռելա-
բոյր այդ շրջափակը որ աշունի կապտորակ
ու ծածկուած, մշուշոտ ու թափանցիկ մի-
ջօրեայքի այդ պահուն, մեղամաղձութեան
մէջ՝ գրաւիչօրէն շնորհալի կ'երեւար։ Նոյն-
բեր երեքն էր, — Մեռելոցին ճիշտ հետեւ-
եալ օրը, — այնպէս որ առջի օրը ու նախըն-
թաց օրը բերուած ծաղիկները չորս զին շի-
րիմները կը պնէին, իրենց տակաւին թարմ
պտակներովը։ Մեծաբաց վարդեր, ձեռք չի
դպած մանիշակներ եւ լայնափթիթ քոխզան-
թէմներ էին ամէնքն ալ։ Ուրիշ ծաղիկներ
ալ, իրենց ծիղերուն վրայ բարձրազուլու ու
կենդանի, վարդակարմիր կռկներներ, ճեր-
մակ անթէմիներ, կարմիր սալլիաներ, ա-
ւելի ուժգին փայլով մը կը փողփողէին ծա-
ռուղիներուն շուրջի բուսականութեան մէջ
ուր, հովի գաղջ ու քաղցրիկ շունչ մը ոսկի
տերեւներու տարափ մը կը թափէր ատեն
ատեն։ Աշունի այդ տերեւները, սեւ ու
բարձր նոճիներու մօտաւորութենէն վատու-
ցած խումբ մը թմբիներէ փրթելով, կը սա-
հէին խոնաւ օդին մէջ։ Զեփիւռին քմահա-
ճոյքին ենթակայ, քանի մը բուռն թափառ-
ալիկէ ետքը, վերաւոր թիթեռնիկներու պէս
կը գլորէին կիյնային, պզտիկ մահաստուեր
չէնքերուն քարին վրայ կամ ծաղիկներուն
մէջը, եւ հոգ, երկու քալ միայն անդին,
կեանքին մօտաւորութենէն էր որ՝ միեւնոյն
ատեն այդ գերեզմանատունին կուտար սերտ
այն հմայքը՝ որով կը զանազանուի ան Բա-
րիզի միւս մեռելատաններէն, — մահուան
հուսկ այդ իջեւաններէն։ Ղէմք՝ վերէն վար
երկնցող շրջապատին շուրջը դարձող բազմա-

բնակ պողոտաները. — աջ կողմէ Թրօքատէ-
րոյի երկու գորշագոյն ու նրբաձեւ աշտարակ-
ները, եւ ձախէն՝ կիսաբաց պատուհաններով
տուներու շարք մը, որոնց մէջէն կ'երեւային
կնկան իրաններ, աղու գլուխներ . . . :

Թէեւ իր հօրը ու մօրը հանգչած այդ
տապանին ըրած այցելութիւնը, կարգ մը
մասնաւոր պարագաներու բերումովը շատ
աւելի սրտաճմրկ եղած էր Միշէլ Կօնթիէին
համար, բայց անիկա շուտով տեղի տուաւ
մեռելական այդ ուխտիսին բանաստեղծակա-
նութեանը՝ որ ազդեց իր հիւանդ ջիւղերուն
վրայ, կամ գէթ, քիչ մը առաջ դժնեայ ըլ-
լալու աստիճան կարկամած իր դիմագծու-
թիւնը, երազանքի մը մէջ թուլօրէն հան-
գալտեցաւ կարծես, իւր թէ փոխանակ լա-
անցուած իր քառասուն տարիներուն՝ որոնց
դրոշմը կերեւար իր զէմքին վրայ, ունեցած
ըլլար հին այն օրերուն տարիքը ու հոգին,
երբ միեւնոյն տարեդարձին, կուգար այցելել
միեւնոյն մատուռը, խանդաղատած՝ առանց
զառնութիւն մը զգալու, յուզուած՝ առանց
քիչախնդրութեան, եւ տակաւին կրած չըլ-
լալով անգութ այն հարուածը՝ որուն աւերքը
կը մասնուէր իր զէմքին սովորական տրամու-
թիւնէն. — իր կնկանը անհաւատարմութիւնը՝
իր էն սիրական բարեկամին հետ։ Այս տարի-
ընտանեկան իր դամբարանին մէջ աղօթելու
համար փոխանակ նոյնմբեր մէկին կամ եր-
կուքին գալու, ամուսնի երեքին գալուն
պատճառը այն էր որ, այդ բարեկամը, որ
տանըմէկ ամիս առաջ մեռած էր, այդ միեւ-
նոյն գերեզմանատունին մէջ էր թաղուած։
Միշէլ վախցեր էր, — ինչպէս պիտի վախ-
նար իր ուժէն վեր ցաւէ մը, — որ կը հան-
դիպի անոր՝ որ իր անունը կրած էր երբեմն
եւ որ սակայն հիմա միշտին ապրին էր . . . :
Ձէր հանդիպած։ Ձէր գիտեր այդ միւսին չի-
րմին ուր ըլլալը եւ դժբաղդ մարդուլը

վայրկեանս իր յուզումներուն սաստկու-
թիւնը կը մոռնար, աշխարհն քաղցրութեանը
առջեւ այդ գիւղանկարին՝ որ աշխարհն աստեղ
իր աղալութեան ու երիտասարդութեան ա-
մէնէն սուրբ երկիւղածութիւններուն կցորդ-
ուած էր . . .

Պիշ պիշ հայեցումի մէջ ձեռք բերուած այդ
խաղաղացումը շատ պիտի չի տեսէր : Միշէլ՝
Ժաննի հետ զէմ առ զէմ գալէ խոյս առնով,
ամէն անակնկալի առաջքը առած ըլլալ կար-
ծիր էր . — Ժանն էր անարժան այդ կնկան
տեսնել, որուն, մեծանձնութիւններուն ամէ-
նէն նախատեսանով, թոյլ տուած էր կար-
գուիլ իր մեղսակցին հետ : — Պէտք եղածին
չափ չէր կասկածեր ինքզինքին վրայ, ոչ ալ
ախտագին ու կրքոտ այն հետաքրքրութեան
վրայ՝ որ զինքը կը կրծէր, իր նախկին բա-
րեկամին հոն հանգչելէն ի վեր : Մէկու մը,
նոյն իսկ ներքին կեանքի այդ աղէտքին
գաղանիքը չի գիտցող մէկու մը շատախօսու-
թիւնը պիտի բաւէր, բանալու համար իր մէջ
հետաքրքրութեան այդ վէրքը, եւ կորցելու հա-
մար իրմէն այն հարցումը՝ զոր ուխտած էր չընել
բնաւ, ինչպէս ուխտած էր բնաւ չի հետա-
քրքրուիլ դրութեան իր բարեկամին շիրմին
ուր ըլլալը հասկնալու համար : Չափազանց
կը վախնար որ պիտի չի կրնար գիտադրել,
ամբողջովին առեւտրութիւնով ու վերաւորուած
գործընթացով խառն, անբացատրելի ու կոկը-
ծալի այն փափաքին՝ զոր չէր կրնար որոշ
կերպով մտաբերել . — երթալու եւ այդ շիրմը
տեսնալու հաճոյքին փափաքը . . . Անդունդի
մը մէջ գահավիժելու պէս անդիմադրելի ու
արագ բան մը եղաւ այն, շատ պարզ կերպով
մը սակայն . . . Պահապանը վերջապէս գո-
ցեր էր պզտիկ մատուռին գոռը եւ շատ
չանցած այցելուին հետ խօսակցութեան
սկսաւ, խեղդատակ այն ընտանեկանու-
թիւնով՝ որ տարկանոնութիւններուն ամէնէն
տարօրինակին մէկ բերումով, շատ մշակ-
ուած կրկայ, հեռուէն կամ մօտէն մեռելային
գործերու խառնուած մարդոց մէջ : Բայց շատ
բնական էր որ Միշէլի անշարժութիւնը հիա-
ցումի նշան մը կարծած ըլլար : Պաշտօնեայի
իր չէն ու հանդարտիկ դէմքով, արծաթ կո-
ճակներով իր հանգստաւէտ համազգեստին

մէջը պարտկուած՝ իր լեցուն առողջութիւ-
նով, այս պատուական հայր Պօնէն «իւր գե-
րեզմաննոց»ով, «իւր ծաղիկներ»ով եւ «իւր
մեռելներ»ով կը հպարտանար : Մեռելներու
այս վերակացութիւնը՝ ուր նետուած էր,
զինուորական գործօն ծառայութենէն քաշ-
ուելէն ի վեր, իրեն համար հանգիստ բնա-
կարան մը, ծերութեան օրապահիկը եւ իրեն-
ներուն բարեկեցութիւնը կ'ապահովէր : Երբ
իր շուրջը կը գիտէր, իր կապոյտ բիւրու
ու իր ժպիտին մէջը, իր արժէթովները
խառնող հասարակ մը երանութիւնը կը թըր-
թաւար, եւ այցելուին մտածումներուն ար-
ձագանգ ըլլալ կարծելով, սկսաւ .

— «Կը հիանաք վրան, պարոն, Բարիդի
էն ազուր գերեզմանատուններէն մէկն է, եւ
էն ազուր նայուածն է կը համարձակիմ ըսել
. . . Եւ հիմա ալ իր էն ազուր ատենը չէ՞
. . . Հոս նայեցէք, պարոն, կը տեսնա՞ք կոր
ձախակողմի սա քէմաթիթները : Այսօր դեռ
բան մը չեն, տասներէնդ օրէն բուրդէ գեղ-
ման պէս պիտի բացուին . . . Անկէ զատ,
պարոնը գիտէ հարկաւ որ, — քանի որ իր
ծնողքը հոս ընտրած է իրեն հանգստավայր,—
հոս, բոլոր շնորհքով մարդիկ են . . . Բոլոր
այն տեսակ մարդիկներ որոնք շատ աղէկ . . .
Պաշտօնակիցներ ունիմ որոնք շատ փոքր կը
գտնան զայն : Իսկ ես կը պատասխանեմ.
Իրեն համար բազմ մըն է ատիկա եւ չիքու-
թիւն մը կուտայ . . . Եւ յետոյ, ա՛լ բնաւ
կամ գրեթէ բնաւ նոր հող ծախուած չունի
. . . Ամէն անոնք որոնք հող ունին, եւ
պէտք չունին այդ հողին, ազուր շահեր
կընեն կոր զանոնք ծախելով, հաւատացէք
. . . Կը հասկնամ : Երբ մարդ կը սիրէ իր
լուսահոգիները, հաճոյք կըզգայ խորհելով որ,
աղէկ մը կը հանգչին անոնք, իրեն շատ
մօտիկ մէկ ասանկ տեղ մը : Որով, պարոն »
— եւ հոս՝ թաքուն փախուով մը, — «խնդրեմ
հաւատացէք որ, ամէն օր նոր խնդիրքներ
մերժելու վրայ ենք . . . »

— «Ըսել է որ, » ըսաւ Միշէլ, որ այդ
տարօրինակ շաղակրատութեան երկրորդ մա-
սին վրայ թեթեւօրէն սարսափեցիր էր, «այս
վերջի տարիներս, հողային արտօնատիրու-
թեան շատ մը առաւելանք եղան »

— «Է՛հ, քիչ շատ,» պատասխանեց գերեզմանապահը: «Երկու մէթրնոց տեղեր տեսայ որոնք հազար ֆրանքի գնուած էին եւ երկու հազար հինգ հարիւր, երեք հազարականի ծախուեցան... Ենթադրենք որ նկուղ մը շինել տուած էք հոս, եւ ետքէն Բարիզը ձգելով, գացիք դեղ տեղ մը հաստատուելու... Ըսենք թէ շատ հոգեւորիկ չէք ընել հոս գալ թաղուելու, այն ատեն ի՞նչչափ գոհ պիտի մնաք երբոր դրամիկ շահովը մէկտեղ նորէն ձեզի վերադարձնեն... Շատ ալ օրինաւոր չա՛հ է, չէ՞:»

Միշէլ Կօնթիէ վայրկեան մը կարծես վարանեցաւ, եւ յետոյ ձայնով մը ուրկէց դողդաւնք մը կ'անցնէր:

— «Կը յիշէ՞ք արդեօք որ, Ժիւլ Պէրիօն անունով մէկը, ձեր օրով, եւ այդ պայմաններուն տակ հող մը գնած ըլլայ հոս:»

— «Ժիւլ Պէրիօն» ըսաւ պահապանը միտքովը փնտռելով: Եւ կրկնեց. Ժիւլ Պէրիօն... Կեցէք... Այո՛, այո՛... Խոշոր, թուխ, շատ նիհար մէկը... Ա՛հ, պարոն, շատ հիւանդ երեւոյթ մը ունէր արդէն հոս եկած ատենը... Հիմա կը յիշեմ: Ես էի նոյն իսկ խորհուրդ տուողը որ այդ տեղը առնէ: Շատ չանցած ինք ալ տեղաւորուեցաւ մէջը... Կան «մեռնելոց»ներ որոնք առանկ բաներ կ'ընեն: Իրենք իրենց ձեռքով կուգին կարգադրել ամէն բան: Իրաւունք ալ ունին: Որչա՛փ դժուարութիւն խնայած կ'ըլլան միացողներուն: Պ. Պէրիօն շատ սուղի չառաւ իր տեղը: Կատարեալ բաղդ մը: Վրայի չէնքով մէկտեղ: Ռուս տիկնոջ մը շինածն էր ան, որուն սակայն վերջէն չի հաւնեցաւ... Կուզէ՞ք տեսնալ: Շատ հեռուն չէ, ահաւասի՛կ, սա կողմը:»

— «Շնորհակալ եմ», ըսաւ Միշէլ եզական տմարդութիւնով մը, եւ ձեռքովը խօսակիցը բարեւելով, մտաւ այս վերջինին ցոյց տուած ճամբուն ճիշդ հակառակ ուղիւթեամբ ծառուղիին խորը:

— «Պարոն», ձայնեց մարդուկը, որ սակայն չփոթած էր ընթացքի այդ յեղակարծ փոփոխութենէն: Պարոն, եթէ գերեզմաննոցէն դուրս ելլալ կուզէք, աջերնուդ պէտք է դառնաք, աջերնու՛դ:» Բայց, երբ տեսաւ

որ Միշէլ բնաւ կարեւորութիւն տուած չուներ իր տեղեկատուութեանը, ուսերը թօթուեց խորունկ փիլիսոփայութիւնովը այլանդակութիւններու վարժուած մարդու մը, որոնք կը վխտան մեռելական արարողութիւններու շուրջը եւ իր պահապանի պտոյտը շարունակեց միմալով:

— «Իրեն հետ ի՞նչ վերաբերութիւն ունի Պէրիօնի հողին՝ ռուս տիկինն մը գնուած ըլլալը: Փախուկի կը նմանի կոր քիչ մը, այս պարոնը... Ճանաչն կորսնցնէ պիտի... Բէ՛ժ. չուտով կը գտնայ, սակէ զատ գերեզմաննոցին մէջը որչափ շատ մարդ ըլլայ, ծաղիկի գողերը այնչափ գժուարութիւն կը քաշեն:»

Բ.

Ծաղիկի գողերը որոնք, նոյեմբեր՝ երկու քին հետեւեալ օրը մահաւանդ, հայր Պօնէի մտազբազուրկեան մշտական առարկան էին, եթէ չիրմաներուն վրայ սփռուած բոլոր վարդերը, բոլոր մօնիշակները, բոյսը քոփզան թէմները մէկտեղ առնէին տանէին, Միշէլ Կօնթիէ նորէն պիտի չի տեսնար զանոնք, իր էն ներքին էութեանը կսկծալի մէկ կէտին այնքան ուժով դպած էր, ըստ երեւութի այն շատ անկարեւոր պատասխանը՝ զոր գերեզմանապահը տուած էր իր հարցումին: Դէպ ի ծառուղին, իր յանկարծական մեկնումը, հեռո՛ւ, շատ հեռու գերեզմաննոցին այն անկիւնէն ուր Ժիւլ Պէրիօն կը հանգչէր, այն «յետս ընկրկումը», այն անըմբռնելի գրեթէ անասնական փախուստն էր, զոր շատ աղէկ կը ճանչնան, իրեն պէս սեւեռեալ թաքուն գաղափարի մը խոցաւքովը տուայտող մարդիկը: Պօռացնելու աստիճան կը կոտտայ ան, երբ հանդիպում մը, — ոչ իսկ հանդիպում մը, պարբերութիւն մը, — յիսկ պարբերութիւն մը, անուն մը միայն՝ զայ սկրթել իրենց մէջ, իրենց հոգիին թաքուն, մշտաբաց ու միշտ արիւնող այդ կէտը: Աշունի անդորր ու քաղցր յետմիջօրէն, իր կապոյտ ու քօղարկու մթնոլորտովը կը շարունակէր շուրջպտտել ամէն բան. գաղտնի մէկիկ մէկիկ կը շարունակէր թօթափել ոսկի տերեւները՝ որոնք դանդաղօրէն կ'ոլորտկէին խոնաւ օդին մէջ. կոնկրէ

նինքը եւ անթէմիաները կը շարունակէին իրար խառնել իրենց փունջերը, նոճիները կը սարսռային միշտ եւ մեծ քաղաքին ժողովները կուգային զարնուելով փշուրի մոռեստի տակ այս օթեւանին շուրջը, ինչպէս լռութեան ու խաղաղութեան կղզեակի մը շուրջը: Ժիւլ Պէրիօնի նախկին բարեկամը մէկէնիւ մէկ կորսնցուցեր էր օրուան ժամուն, օդին, ամէն բանի գիտակցութիւնը, բաց ի սա մէկ բանին գիտակցութենէն թէ, այն մարդը որուն չարաչար խաբէութիւնը այնքան տառապեցուցած էր զինքը, ուզած էր իր յաւիտենական քունը քնանալ ճիշտ քովը այն գետնափորին՝ ուր ինքն իսկ, Միշէլ Կօնթիէ պիտի հանգչէր օր մը:

— «Անանկ է ուզեր, անանկ է ուզեր.» կը կրկնէր ինքնիրենը, միշտ առաջ երթալով եւ մէկիկ մէկիկ ամէն ծառուղիներէն անցնելով: «Ըսել է իմ կարծածիս պէս չէ եղբւր, օրինակի համար մոռցուած կտակի մը մէջ արձանագրուած ծրագրի մը մեքենական գործադրութիւնը, այն ատենները՝ երբ միասին կուգայինք հոս, եւ երբ ինծի կը յայտնէր իր մտադրութիւնը թէ կուզէր իմ շիրիմիս քովը չիրիմ մը ունենալ. . . . Իմ շիրիմիս փոխը շիրիմ մը ունենալ. . . .» Ինքնիրենը կը կրկնէր այդ խօսքերը, որոնք իրեն կը յիշեցնէին, այս միեւնոյն տեղը, իր ունեցած երիտասարդի խօսակցութիւնները՝ անոր հետ զոր եղբոր մը պէս սիրեր էր եւ որ անանկ վատութիւն մըն էր ըրեր իրեն դէմ: «Եւ Ժաննալ թող տուեր է. . . . Ժաննալ ոչ իսկ խորհեր է որ, այս մատուռին ընկելք խեղճուկ սա այցելութիւններս անգամ, խիստ ցաւառիթ պիտի ըլլային ինծի համար այդ պատճառով: Ըսել է՝ որ ինծի այդչափ տառապեցնելին քիչ կը տեսնան կոր. . . .»

Ինքնիրենը կը խօսէր ասանկ եւ այն մտառներով որ կ'ամփոփուէր ընտանեկան ահաբեկ այդ տառապ, կ'արթննային իր յիշողութեանը մէջ, այն աստիճան յստակ ու ճշգրիտ որ, կարծես անհաւատարմութիւնը չէ թէ ութը տարի առաջ, այլ երէկ, նոյն իսկ այսօր գործուած ըլլար: Բարոյական ցաւի կարգ մը ծայրայեղութիւններ բովանդակ հոգին կը թունաւորեն, իր բոլոր

մտածութիւններուն մէջը, ինչպէս որ, չաքարախար բովանդակ մարմինը կը թունաւորէ, իր բոլոր բջիջներուն մէջը: Կեանքը կապականէ ան, իր աղօթիւրներուն մէջը իսկ եւ կը ջնջէ վերաշինող այն ուժը որնոր հիւսկէնները կը կազմէ եւ վէրքերը կը սպիւնացնէ: Այդ շատ հեռաւոր օրէն ի վեր՝ ուր իր բարեկամին ու իր կնկանը մեղապարտ յարաբերութեան գաղտնիքը մէջտեղ հանած էր, Միշէլ Կօնթիէ չէր կրցած բուժուիլ իր ցաւէն. . . .

Շիրիմներուն մէջէն քալելով, գրեթէ վազելով հանդերձ, ինքնինքը միաքը կը բնութէր այն թուականին. գաղափարներով ինչ թարմ, թեթեւ սիրտով, կեանքոտ ու աշխոյժ էր, քստմենի յայտնութենէն առաջ: Այն Որչափ քիչ կը կասկածէր իր կեանքին էն եղբրական այդ վայրկեանին մօտ ըլլալը, կէս ժամ, քառորդ ժամ մը միայն, նոյն իսկ ատկէ հինգ վայրկեան առաջ: Այն օրը, նախաճաշէն ետքը դուրս էր ելեր, կնկանը ըսելով որ իրիկունէն առաջ պիտի չի վերագառնայ: Մօնսօ փողոցէն՝ ուր կը բնակէին, անցած էր Սէնթ-Օնօրէ թաղը, անկէց ալ Շանզ-Էլիզէ, վայրկեան համար գարնանային այն արեւը՝ որուն արքայող տպաւորութիւնը կը յիշէր դեռ. — իր վերջին ճամբարտապէս երջանիկ տպաւորութիւնը: Ամենաշնչին պատճառով մը, դրամապանակը մոռցած ըլլալուն համար, մէկէնիւմէկ տուն էր դարձեր: Առանց զանգակը զարնելու, իր բանալիովը բացեր էր դուռը եւ նախասենեակին մէջ, ուրկէ բացակայ էր այդ պահուն ծառան, ճանչցեր էր Ժիւլ Պէրիօնին գաւազանը ու բարտըսին: «Ինչ բաղդ,» ըսեր էր ինքնին «մէկտեղ կ'առնեմ զայն հիմա:» Այդ նախասենեակէն եւ կողմնակի նրբանցքէ մը նախ իր սենեակին էր անցեր, անանկ որ տունին մէջ ոչ ոք էր իմացեր իր ներկայութիւնը: Պղտիկ սրահը հասնելու համար, պէտք էր իր կնկանը սենեակէն անցնիլ: Այդ երկու սենեակները իրարմէ զատող դուռը դիպուածով վրայ եղած էր միայն, այնպէս որ կրցեր էր բանալ զայն, առանց մղակիւն (loquet) աղմուկովը սթափեցնելու երկու անխոհմենքը որոնք ինքզինքնին ապահով կարծելով

իրենց գլուխ գլխի տեսութեանը մէջ, բարձրաձայն կը խօսէին այդ պահուն եւ զիրար կը դուզէին։ Երբ Միշել լսեւ էր ժիւլին ձայնը որ ժամներն կըսէր, յանցանքը մասնանիշող այդ դուռը, գրան վարագոյլը վեր առնելու եւ մէջտեղ ելլալու չափ ուժ չէր զգացիր իր մէջը։ Ամբողջ խօսակցութիւններն մտիկ էր բերել։ Ո՞րչափ ատեն։ Չէր գիտեր։ Եւ հոն, այդ դրան ներսի շրջանակին կրթնած ու սոսկումէն քարացած եւ մահու չափ դժգուհած վիճակի մէջ գտնուէր զինքը, իր կինը, երբ շատ վերջը, իր սիրահարին մնաստարով ըսելէն ետքը, ինքն ալ ուղեր էր սրահէն անցնելով իր սենեակը երթալ։ Միշելի ականջներուն մէջ կը թնդար զեռ մորմոքիչ այն գոչիւնը զոր արձակեւ էր ան, զինքը տեսնալով, այն պահուն երբ ինքն իսկ, իրեն անձանթ խուլ ձայնով մը կը զուրցէր։

— «Մի՛ վախճաք։ Եթէ այս պահուս իսկ չի սպաննեցի ձեզ, զանկա ու քեզ, ա՛լ քիտի չի սպաննեմ . . . »։ Բայց որովհետեւ կինը բողբոքի չարժու մը կը փորձէր ընել. «Ո՛չ ալ սուտ խօսիլ փորձեցէք։ Մի՛ պաշտպանէք ինքզինքնիդ։ Ամէն բան լսեցի . . . Սպասեցէք։ Տալիք որոշումս հիմայ պիտի իմացնեմ ձեզի . . . »։

Այդ որոշումը, կը վերջիչէր զայն հիմա, իր միտքին ներկայացող այդ տեսիլներէն մէկուն մէջ. . . Կը տեսնար ինքզինքը, քրտամեկի յայտնութենէն քանի մը ամիսներ ետքը, — այնչափ ժամանակ՝ որչափ պէտք էր կարգադրելու համար մէկը այն ամուսնալուծումներէն՝ ուր ճշմարիտ պատճառները կը ծածկուին կարգ մը պատուականերու տակ՝ զորս ամէն մարդ կլլած ըլլալ կը ձեւացնէ, — այս՛, կը տեսնար ինքզինքը, առաւուն կտնուի, ծովին վրայ, կրթնած՝ եզրապատնէշին վրայ այն չոգնեալին՝ ուր նստած էր աշխարհի շրջանը ընելու համար. եւ իր ետին կը դիտէր Փրանսական ծովեզրին անհետանալը, այն ֆրանսային ուր թողած էր իր կինը եւ զայն գլխէ հանողը որ ազատօրէն սիրեն զիրար, կարգուն իրարու հետ եւ վերակազմեն իրենց կեանքը։ Ոչ հարուածել, ոչ ալ ներել ուզած էր անոնց։ Ուզած

էր նուաստացնել զանոնք այն վեհանձնութիւններէն մէկովը, որոնք վրիժառութիւն ներուն էն անգութներն են հանդէպ անոնց՝ որոնք երթակայ կըլլան այդ վրիժառութիւններուն, եւ որոնք կրգզան սակայն անոր պարունակած բովանդակ արհամարհանքը . . . Բայց ասոնք կըզգային արդեօք այդ արհամարհանքը։ Ահա հարցում մը զոր անտրգուած ամուսինը բարկութեան ու զայրոյթի վերարծարծումներուն մէջ կընէր ինքզինքին, մինչ չոգնեալ իր միօրինակ ու անդառնալի ընթացքովը կերթար, միշտ կերթար։ Առջի օրէն համակերպելով իր սուած որոշումին, Միշել ընաւ չէր ակարացի զայն գործադրելու մէջ։ Նախկին սպայ եւ իր կարգուելու ատենը միայն հրաժարած զինուորութենէ ուր կեցած էր երկար ատեն, իր երկտասարգութեանը ժամանակ, գաղթալին պատերազմներ էր մըղած եւ ինքզինքը ամենէն արիակամ ու կորովի բաները ընելու կարող կըզգար։ Աշխարհիկ գայթակղութեան մը վախին ալ ականջէր կախած։ Ինքը ամէն կերպով նկարագրելի տէր եւ զրեթէ խստաբարոյ մարդ մըն էր եւ հասարակաց կարծիքը բացարձակապէս կ'արհամարհէր։ Միեւնոյն ատեն չէր ալ դադարած սիրելէ ժամներ, անանկ կիրքով մը՝ որ մէ եթէ ընկճուէր, ինքզինքը վերջին աստիճան արհամարհէր պիտի։ Ինչու որ հիմակուան իր այդ սէրը ատելալու ըզձանքի, դարչելի այն եռքն էր որ, զձուձ արարած մը սիրող մարդու մը սիրտին մէջ, կեղի կիզի ներսում մը կը պայթեցնէ։ Չէ՛, ինչ որ խնդրին այդ վերջնական ելքին առաջնորդած էր զինքը, — ելք մը՝ որ այնքան քիչ յարմար կերեւար իր անձնական քաջութեանը, իր արդարացի ընդդուստներուն եւ իր դառնակսկիծ նախանձոտութիւններուն, — իրեն իսկ համար զրեթէ անիմանալի բան մըն էր եղած, իր էութեանը մէջ զսպանակի անսակ մը խորտակում որ հանդէպ իր կնկանը, այլ մանաւանդ հանդէպ կեղծ բարեկամին, որ եւ է գործողութիւն անկարելի ըրած էր իրեն։ Իր տղայութեան եւ երկտասարգութեան ընկերոջը յանկարծ մէջտեղ ելած անզգամութեանը առջեւ, զգացել էր սարսափի ու ատելութեան այն տեսակ մը նողկանքը որ

յուստահատութեան ձեւերէն մէկն է : Կարգ մը այն աստիճան հրէշային վատաբարոյութիւններ՝ զորս անկարելի կը դատենք , կարծես ուժութեամբ կընեն մեր ցասումը : Այն վայրկեանէն իսկ որ , այդ բաները տեղի կուտան , ալ ի՞նչ պէտք կուտիլ անոնց դէմ : Եթէ նոյն իսկ , Պէրիօնի բովանդակ արիւնը թափէր իր առջեւ , Միշէլ պիտի կրնար ջնջել այն պղծութիւնը , որով անուանալի ըլլալու աստիճան աղտոտած էր իրենց բարեկամութիւնը նոյն իսկ իր անցեալին մէջ : Կարգ մը քստմեղի վատութիւններու դէմ , հպարտ սիրտի մը բնազդումը կըլլայ , ալ աւելի քստմեղի դարձնել զանոնք՝ չի պատկերով , չի թոյլատրելով զանոնք որ պարտքերնին վճարած ըլլալու տպաւորութիւնը ունենան : Ահա թէ ինչու Միշէլ չէր թոյլատրած ինքզինքին այդօրինակ վրիժառու մը : Զի թոյլատրելու իսկ պէտք չէր ունեցած : Գարշանքին սատակութիւնը , ամէն բանի յաղթած էր : Բայց նախատինքը այնքան խորպէս մխուժած էր հոգիին մէջը որ , Ժաննի աղուորութեան , աչուրներուն , բերնին , համոյրներուն տեսլանկարը միւսին գաղափարին խառնուելով , կը չարչարէր զինքը անանկ ներոյթ այրուածքով մը , որ կը յիշէր մեկնումի այդ պահուն զգացած ըլլալը կատաղութեան մոլուցք մը , եւ գայրագին բաղձանք մը՝ գալու , զանոնք երկուքն ալ , բարեկամութենէն դողացող իր ձեռքերուն մէջը առնելու , գետինը նետելու , կոխկրտելու եւ սպաննութեան մը մէջ հանդարտեցնելու այն տենցը՝ որ զինքը կը ցնցէր . . . Յետոյ նորէն , չափազանց դաւնօրէն խտրուած մարդու ի՞նչ պէտք ինկեր էր իր սիրտին վրայ , եւ արցունքները ժայթքեր էին , հոսեր էին ծովին միջ , որ յաւերժօրէն կ'ալիւժփէր . բնական վայրին ու իր միջեւ , եւ որուն ծանրաշարժ արեւները , — իրեն պէս անկարող ու վշտաւոր , — կուգային փշուրի շոգենալին կողերուն վրայ . . .

Շատ ժամանակ անցնելէն ետքը միայն վերադարձեր էր , վրէժ չէր լուծած : Ժաննի կարգուեր էր Պէրիօնին հետ : Ալ ուրիշ բան չէր իմացեր Միշէլ , իր առաջին երկար ճամ

բորդութենէն ետքը , երկրորդ մըն ալ ըրեր էր , անընդհատ շարժումէն , իր շուրջը՝ իրերու ու մարդերու գրեթէ ամենօրեայ փոփոխութենէն , զինքը դադող գաղափարը հեռացնող միջոց մը կ'ակնկալէր , չա՛տ ուրիշներու պէս : Ետքէն վերահաստատուեր էր Բարիզի մէջ , համոզուած ըլլալով շատ մը ուրիշներու պէս նորէն , սա հին առածին ճշմարտութեանը թէ ժամանակը ամէն բանի կը յաղթէ . եւ կարծիք էր որ պիտի կրնայ առանց շատ սառապելու , նորէն տեսնալ իր նախորդ բարեկամը եւ նախորդ կինը : Իր վերադարձէն ետքը , երկուքն ալ զատ զատ տեսեր էր , եւ այդ երկու հանդիպումներէն ոչ մէկը արդարեւ , առաջ բերեր էր իր մէջը . տուած որոշումէն յանկարծ հտ դառնալու այն պարագան որմէ կը սոսկար ամէն բանէ աւելի : Երկու անգամուն ալ իր կեանքէն խորունկ կերպով , բացարձակապէս դուրս քաշուեր երեւցած էին անոնք իրեն : Յարատեւօրէն եւ առանց պատահարի , անոնց վրայ խորհելով խորհելով , անոնց բուն անհաւորութիւնը նուազ իրական դարձած էր , քան այն պատկերը զոր շինած էր ինք՝ իր մէջը՝ անոնց վրայ եւ որ սակայն կը շարունակէր կրծել իր հոգին , թաքուն բայց անբուժելի խաժուածքով մը : Աւելի օրուրէն տարրեր կերպով , բայց նոյնքան հիւանդ էր դեռ . եւ այդ՝ չափէն աւելի յստակ կերպով կըզգար հիմայ : Զափէն աւելի յստակ կերպով զգացեր էր զայն երկու պարագաներու ալ մէջ , որոնք հիմայ իր յիշողութեանը կը ներկայանային եզական ճշգրտութեամբ մը եւ որոնք այս ողբերգութեան երկու վերջին շարադէպները կը յատկանշէին . . . Կը յիշէր որ առջի տարին , Ժիւլ Պէրիօնի մահուրէն քանի մը չարաթ առաջ , բան մը որ անկարելի էր իրեն գուշակել այն ատեն , որ մը թղթաբերին միջոցով յանձնարարուած նամակ մըն էր ստացեր , որուն պահարանին վրայ ձանչցեր էր գիրը . գիր մը՝ որ ասնով այնքան յարգանքի ու գոյութեանքի , եւ յետոյ այնքան քինախնդրութիւններու ու արհամարհանքներու կցորդուած էր իրեն համար : Կը յիշէր : Դողալով բռներ էր այդ պահարանը , զոր ֆիզիքական ատելութեամբ մը

սեղանին վրայ էր դրեր , խորհելով այն մատ-
ներուն՝ որոնք ձեռնադրած էին զայն : Շատ
վերջն էր որ ինքնիրենը հարցուցեր էր թէ
իրեն գրելու ինչ պատճառ կրնար ունեցած
ըլլալ ժաննի երկրորդ ամուսինը : Այն ատեն
յանկարծ , ատելութեան զայրուցքէ մըն էր
բռնուեր նման անոր՝ որ եօթը տարի առաջ ,
չոգենալին կամրջակին վրայ ստրսած էր
զինքը : Մոմ մըն էր վառեր , պահարանը
առանց բանալու , ունելիով բռներ եւ բոցին
մէջը նետելով այրեր էր : Երբ միմիայն սեւեռ-
րակ աճիւններ մնացեր էին , կանչեր էր
ծառան . եւ տղայական բայց խորունկ հըրճ-
ուանք մըն էր զգացեր բիրտօրէն ըսելով
այդ մարդուն . «Մաքրէ՛ նայիմ սա մընտը-
ռութիւնը . . .» : Ամիս մը ետքը , լրագրի մը
երկրորդ էջին մէջ ընդնշմարուած երկու առ-
ղեր , իր սիրտը տակնուվրայ կընէին : Անոր
մէջ կը կարդար . — «Երէկ տեղի ունեցաւ Պ.
Ժիւլ Պէրիօնի յուզարկաւորութիւնը : Թա-
ղումը կատարուեցաւ Բասիի գերեզմանա-
տան մէջ . . .»

Գ.

Վերջուշուններու այդ յորձանքը այնքան
բուռն էր եղեր , եւ Միշէլը՝ անցեալին մէջ
այնչափ հեռուն էին տարեր որ , երբոր ինքը-
զինքին եկաւ , կը նմանէր մէկու մը որ
քնաչըջիկութեան նուազէ մը սթափած է :
Ինքզինքը դուրսը գտաւ մնուկական այդ
չըջափակէն՝ որուն սեմէն անցեր էր առանց
իսկ զգալու : Արդէն ճամբան բռնած էր
չըջապատին քովը ի վեր , որ գերեզմանա-
տունին Հանրի-Մարթէն պողոտային մասը
կը դոցէ : Այդ կողմը մայթը չատ վարօք ըլ-
լալուն , յանկարծ եզական մտածութիւն մը
ունեցաւ չըջապայօղը , որ սակայն ինքզինքին
եկեր եւ ըսեր էր ինքնիրենը . «Ըսե՛լ է
բուժուելիք չունիմ ես այս ցաւէն» : Միտ-
քովը նրբանցք մը բացաւ պատին մէջէն , եւ
սկսաւ խորհիլ որ եթէ յռաձաձառար այդ նըր-
բանցքին մէջէն , պիտի հանդիպէր իր նախ-
կին բարեկամին գաղթարանին , եւ թէ այդ
ատելի մարդուն մարմինը հոն կը հանգչէր
այս պահուս իսկ , ճիշդ իր գտնուած բարձ-
րութեան համահաւասար այդ տեղը , իրեն
հետ գրեթէ մէկ գիծի վրայ : Տարօրէն այդ

գաղափարը , իր միտքին առջեւ ա՛լ աւելի
իրական կերպով կը պարզէր , քիչ մը առաջ
գերեզմանապահին պատմած բաները , որով
անմիջապէս հարցում մը ծրագրուեցաւ իր
երազանքին մէջ , բայց յստակ , ճշգրիտ հար-
ցում մը :

— «Ինչո՞ւ , » կը հարցնէր ինքնիրենը ,
«այժ , ինչո՞ւ հոս թաղուիլ ուզեր է . . .
Ինչո՞ւ . . . Բայց ինչո՞ւ ինծի նամակ էր գրած
մեռնելէն ամիս մը առաջ , Գիտէ՞ որ պիտի
մեռնէր : Ապահովաբար , եթէ հաւատանք սա
պահապանին զուրցածներուն , որ ինք պատ-
ճառ մը չունի գոնէ , ինծի ստելու . . . Ինչ
գրած էր ինծի արգեսք այդ նամակին մէջը :
Ներում կը խնդրէր , ապահովապէս : Ներում
մի : Իբր թէ այդ օրինակ թշնամանքէ մը
ետքը կարելի ըլլար ներում մը : Իբր թէ ոչինչ
աշխարհի վրայ ոչինչ , մահը նոյն իսկ ,
կարենար ջնջել այդ բանը . կամ կարենար
արգիլել որ չի խաբէր , լրբօրէն , անարգօրէն
չի խաբէր զիս . . . Մահուան մօտ , քիչ մը
պատուոյ զգացում ունեցեր է : Զղջացեր է . . .
Փափագեր է որ դժամ իրեն , բառ մը , շար-
ժուձեւ մը որ գոնէ քիչ մը մեղմացնէր իր
հոգեվարքը . . . Բայց ետքէն , երբ տեսեր
է որ չեմ պատասխաներ կոր իրեն , ուզեր է
նոյն իսկ մահուան մէջ խորխտալով ինծի
դէմ , ասպարէզ կարդալ : Ահա՛ իր գերեզ-
մանին ընտրութեան գաղտնիքը : Ա՛խ , խա-
տառա՛կ . . .»

Արդարեւ , կրնար խայտառակութիւն մը
եղած ըլլալ : Բայց Միշէլ ի դուր կը ճգնէր
փաստ փաստի վրայ ապացուցանել ինքզինքին
թէ ատ էր բուն պատճառը , Պէրիօնին՝ այդ
գերեզմաննոցը ընտրելուն . իրենց մէկտեղ
անցուցած անցեալէն բան մը կար որ կը բռ-
ղօքէր ատոր դէմ . տղայութեան ու պատա-
նակութեան անմոռանալի այն անցեալէն , զոր
մարդ էակին տրուած չէ արմատաքի խել
հանել , իր սիրտին կամ այն ատենի ընկեր-
ներուն սիրտին մէջէն , ինչ որ ալ ըրած ըլ-
լան իրեն , ինչ որ ալ ըրած ըլլայ ինք անոնց՝
եւ հակառակ իր կամքին բուռն ճիգերուն ,
այն առեղծուածը՝ որուն յուսահատօրէն կը
բախէր ութը տարիէ ի վեր , նորէն կը ցըց-

ուէր դժբաղդ մարդուն միտքին առջեւ : Իր բարեկամը խնտօր կրցեր էր ընել այդ բանը , առանկ զարհուրելի կերպով խաբել զինքը , իր տունը անպատուել , իրենց բարեկամութիւնն ալ անպատուել , ամբողջովին յարգանքով ու վստահութիւնով օժուած , առնացի եւ ուղղամիտ այդ գործունքը , տեսակ մը զուգերգ քերթուած՝ որուն համար այնքան տարիներ , երկուքնին ալ պարծենցեր էին : Բայց սակայն , Ժիւլ իր բարեկամը , իր ճշմարիտ բարեկամը եղած էր : Միշէլ Կօնթիէի յիշողութեանը առջեւ , իրենց մէկտեղ անցուցած սոցալութենէն եւ երիտասարդութենէն հազարաւոր տեսարաններ կը պարզուէին , միամիտ ազապոյցներ՝ բնական եղբայրակցութեան մը որ , աւա՛ղ , չէր կրցեր զիմանալ կնկան մը փորձիչ շնորհալիութեանը . . .

Այդ բարեկամութեան հանդէպ Պէրիօնի գործած ոճիրին համար եթէ ոչ արդարացում մը , գէթ մեղմացուցիչ պարագայ մը կը գըտնէր սա մտածումին մէջը թէ , Ժանն էր որ հրաւիրած , գրգռած ու գլխէ հանած էր զայն : Քանի՛ քանի անգամներ Միշէլ ընդունարած էր այդ ճշմարտութիւնը , ակնյայտ՝ ամէն անոնց համար որոնք իրեն պէս կը ճանչնային այդ երկու էակները : Ինք , բնաւ չէր ուզած ընդունիլ այդ ճշմարտութիւնը . բայց երբ , իրմէն քանի մը քայլ ակզին յաւերժօրէն հանգչող իր նախկին բարեկամին մտածումովը հոգիին մինչեւ խորը յուզուած , գերեզմանատունին երկայնքն ի վեր կ'երթար , յանկարծ , այդ երկուքը , կիներ եւ նախկին այդ բարեկամը , իր միտքին կը ներկայանային , իրենց բնութեան այն աստիճան խորունկ իրակասութեանը մէջ որ ահռելի առեղծուածը ինքնիւրեն կը լուծուէր : Իր կիներ կ'երեւար իրեն , զգայասէր ու հետաքրքիր խարտիշուհիի իր սիրուն գէմքովը , քիչ մը խաթափոյն իր աչուրներով՝ ուր երբեմն դաժան բան մը կը տարուբերէր , վտանգաւոր ու գգուանքոտ , կեղծանոյշ ու շուրջպատող չեմ գիտեր ինչով մը որ անոր էութիւնը իսկ կը կազմէր : Նոյն իսկ ամէնէն աւելի կուրօրէն զայն սիրած ատենը , Միշէլ տառապած էր միշտ , հրապուրիչ ու բարեհամբոյր մանկամարդ այդ կնկան մէջ հետուէն հետու անորոշ ու անարկու բա-

ներ մը գուշակելով : Երբեք պայծառ ու թափանցիկ կերպով չէր ներկայացած ան իր աչքին : Միշտ իր ձեռքերուն մէջէն խոյս տալու պատրաստ գտեր էր զայն՝ որ իրմէ աւելի զօրաւոր էր , օժտուած՝ ճարտարանուրբ , թեթեւաշարժ , եւ , — հիմա՛յ կը հասկնար , — նենգամէտ ուժով մը : Իր երկտասարդութեան բարեկամը , ընդհակառակը , ի՛նչ զիւրահաղորդ հոգի մը ունէր . համակ լայն խոյանքներէ կազմուած հոգի մը , սղալամիտ տկարութիւններով ընդհուգուած , փափկանուրբ , եւ համակ բարձրաթոփչ ըզձանքներով հոգի մը առանց տեւական ոգիի . բայց իր սոցաւորութիւններուն այնքա՛ն ենթակայ , այնքան յարաւորօրէն ու այնքան զիւրատար հոգի մը : Իր կարծես թերաւարտ , ու երկար ատեն իր տարիքէն չատ աւելի թարմ մնացած զիմագծութիւնը ատ կ'ապացուցանէր : Լուսաշող ճակտի մը տակ աղուոր , վառ աչքեր ունէր եւ բերնին վրայ ի յայտ կուգար զգայասիրութիւն մը որ , ատեն ատեն , իր դէմքին ազնուականութիւնը կը խաթարէր թէ անհաւատարմութեան այս տաւիին մէջ , ան՝ հրապուրուած էր , եւ կ'ինն էր զայն հըրապուրողը , ահա ինչ որ Միշէլ չէր ուզեր գեռ ընդունիլ . . . Չէր ուզեր ընդունիլ , Բայց զի՛տէր անանկ ըլլալը :

Ասոր փոխարէն , ինչ որ չէր գիտեր , ինչ որ բնաւ չէր ուզած գիմանալ , — ինչու որ իր բուն այդ հետաքրքրութիւնը առանց ամենաանուատացուցիչ քննութեան մը պիտի չի կրնար գոհացնել , — իր անհետանալէն ետքը այդ երկու էակներուն իրարու հետ ունեցած յարաբերութիւններն էին , ոճրապարտ այն ընտանեկարկին տակ որ իր ներդաւիտ արհամարհանքէն օգտուած էր կազմուելու համար : Քանի քանի՛ անգամներ , ինքզինքին ըրեր էր սա միւս հարցումը . « Երջանի՞կ են արդեօք : » Եւ նորէն , այդ գերեզմանատունէն բղխող տեսակ մը թեւադրանք՝ որմէ չէր կրնար իր օձիքը ազատել , կը բռնադատէր զայն հարցնել ինքզինքին . « Երջանիկ եղա՞ն արդեօք երբեք : » Միտքովը կրկնելով այդ բաները , կերթար ու կուգար անբաւարար այդ պատան ի վեր , որուն ետին , յաւիտենականօրէն համր , կը քնանար այն միակ անձը .

որ պիտի կրնար պատասխանել այդ հարցու-
մին : « Երջանիկ եղանակ արգելաբար »
կը կրկնէր չըջագայողը , եւ յիշողութեան
ակամայ աշխատութիւնով մը , կը ժողուէր ,
կը միացնէր , բոլոր այն տարրերը , զորս
տարիներու միջոցին , հաւաքած էր առանց
իր ուզելուն . . . Նոյն , ինչ տեսակ կեանք
վարելին : Հիմա կը հասկնար որ , իրենց
կեանքին տիրապետող ու տեւական յօժա-
րութիւնը եղած էր , իրենց գոյութիւնովը
կարելի եղածին չափ արգելք չըլլալ , նախկին
բարեկամին ու նախկին ամուսնին կենցա-
ղին : Պէրիօն հրաժարած էր իր պաշտօնէն ,
կարող ըլլալու համար մեկնիլ Բա-
րիզէն , երբ ինք՝ Կոնթիէ՝ հոն գալու ըլլար :
Հրաժարած էր նաեւ այն երկու ակումբներէն՝
որոնց երկուքն ալ անբաւ էին : Այնպէս
մը ըրեր էր որ կարող ըլլայ իր յաճախած
չըջանակներէն քաշուելու , եւ իր կիներն ալ հե-
ռացնելու : Այդ որոշումը որեւի՞ն էին տուելու
Ժիւլ , — Միշէլ ապահով էր ատոր , — այն
միեւնոյն Ժիւլը՝ որուն նայուածքը անկարող
էր մոռնալու , մայթին վրայ , դէմ առ դէմ ,
իրենց միակ հանդիպումին տեսնը . անմիջա-
պէս անդին դարձուած նայուածք մը , ուր
սակայն , ինք ատեն ունեցեր էր խնդրանք
մը եւ կսկիծ մը կարգալու . . . Ի՞նչ կսկիծ ,
Ատոր հակառակ , Միշէլ կը յիշէր Ժաննի
հետ իր հանդիպումը , ան ալ միակ , բայց ոչ
անմոռանալի հանդիպում մը . Բէ փողոցին
մէկ վաճառատունէն գուրս կելլար ան , բարձ-
րաձայն խնդալով , խօսելով ուրիշ կնկան մը
հետ որուն պոռոտ արդուզարդը ընկերային
արտակեղծութիւն մը կը մատնէր , ինքն
իսկ հագուած՝ քիչ մը շատ աչքի գարնող այն
վայելչութիւնով՝ ուր ինքնացուցադրութիւն
մը , գէշ ընկերակցութիւններ եւ թեւ
թեւ շեղում մը կը զգացուի : Առաջուրնէ ա՛լ
աւելի սիրուն կերեւար հիմա , քիչ մըն ալ
վրայ եկած , իր միեւնոյն թարմ ու փայլուն
գիւսպոյնովը , իր խնդուն աչուրներովը , եւ
իր համակ էութենէն ըլլող անանկ յանդգ-
նութիւնով մը , որ զինքը տեսած ատենը
ամօթէն ոչ իսկ սարսափներ էր : Շքեղ կազ
մածքով վիթթօրիա մըն էր նստեր , շատ հա-
ւանօրէն իր ընկերութիւններն ըսելով . « Լա՛յ ,

առջի էրիկս նայէ՛ . . . » : Որովհետեւ այս վեր-
ջինը գրեթէ անմիջապէս ետին էր դարձեր ,
պիչ պիչ Կոնթիէին երեսը նայելու համար . . .
Այս երկու հանդիպումներուն հակադրութենէն
ի՞նչ կելլար : Ոչինչ , Եթէ ոչ սա թէ , ա-
մուսնալուծութիւնով կազմուած այդ ընտա-
նիքին մէջ , մարդը կ'աւելնար իր բարեկամին
հանդէպ իր բրած անհաւատարմութեանը հա-
մար , իսկ կիներ՝ ո՛չ . . . Ի՞նչ կը նշանակէր
արդէն , մեռնելէն առաջ Պէրիօնին փորձած
ձեռնարկը . . . Բայց , եթէ ատանկ էր , —
եւ ատանկ ալ էր . — այդ խիստ ինտո՞ր
հաշտեցնել , գերեզմանին ընտրութեանը հետ
Եւ Միշէլ պատին վրայէն կը դիտէր խաչե-
րուն ու դամբարաններուն չըջագծուիլը . ինք
նիրենը կըսէր . « Սա յիշակերտներէն մէկն է
թերեւս իրը , թերեւս սրվիկա է , թերեւս
սա՛ միւսն է . . . » եւ այդ քորը տեսնելու
ահալի հետաքրքրութիւնը նորէն կը մեծնար ,
կը մեծնար իր մէջը , մինչեւ այն պահը ուր ,
զինքը տակնուվրայով հակասական յուզում
ները , արգարեւ , այդ շիրիմը տեսնալու խնդ-
անդիմադրելի պէտքի մը փոխուեցան . հոն
թաղուած մեռելին անունը աչուրներովը լա-
փելու բուն պէտքի մը . — իբր թէ անհա-
ւատարմութեան յաջորդող կեանքին գաղա-
նիքը կարելի ըլլար խլել այդ նկուզէն , զոր
իր հակառակորդը իր ձեռքովն էր ընտրել :
Ինչո՞ւ . . . Անդրիւրմի ի՞նչ անգթութիւնով
մը վառուած . . . Կամ , — թերեւս , — ի՞նչ
խնդրանք մը ունենալուն համար : . .

Դ.

Վերականգնել խցիկն էր մտեր , սիրտը՝
տրոփուն , այտերը կասկարմիր , ձայնը խղ-
ղուկ , իբր թէ գէշ գործ մը ընելու վրայ
եղած ըլլար : Հարցուցեր էր ուր ըլլալը այդ
շիրիմին , որուն գաղափարին առջեւ իսկ ,
լեղապատառ դուրս էր փախեր գերեզմանո-
ցէն գեռ քիչ առաջ : Հիմայ կեղծանակ
ծառուղիէն կը քայլէր , ձեռքը ունենալով Հոգա-
բարձութեան յիշաթուղթը՝ զոր պաշտօնեան
տուեր էր իրեն , եւ զոր մեքենական ակ-
նարկով մը կը կարդար , իր խռովքին մէջը
իսկ սրանեղած , այդ վաւերաթուղթին եղե-
րական անանձնաւորութենէն (impersonnalité)

որ քանի մը տալուած տալազներու մէջ ամբողջ մարդկային ճակատադիր մը կը բովանդակէր : «Ներկայս ստորագրող վերակացուն կը վկայէ որ Պ. Պերիօնի, Ժիւլ անուանեալ, մարմինը քաղուած է 8 դեկտեմբեր 189 ին, եւ մշտեցեալական արտոնութիւնով գեեղեղուած է հարաւի գիծին վրայ 15րդ բաժանումին, արեւելեան կողմը թիւ 18 . . . » Միշէլ նշանատախտակները քննելով կը կրկնէր «Տառնըհինգերորդ բաժանում, չորրորդ գիծին վրայ . . . » եւ դամբարանները կը համբէր . . . Մէկէնիմէկ կանգ առաւ, իր տեսածին վրայ այն աստիճան խռովալուզուած որ ուժաթափ չի նալու համար պարտաւորեցաւ ծառի մը կրթնիլ : Ազէկ մը կը կարգար Ժիւլ Պէրիօնի անունը, շատ պարզ քարի մը վրայ զոր խաչ մը միայն կը զարդարէր եւ որուն վրայ թուականէ ուրիշ բան չիկար . բայց այդ քարը, թարմ խորճերով վերէն վար ծաղկած չիրմաներուն ճիշդ մէջտեղը մերկօրէն, արդէն իսկ լքուած երեւոյթով մը կը ցոլէր : Իր դարգարանք ըլլալով միայն, առջի տարին, թաղման տառնը գրուած արհեստական պատկերները կային որոնք կտոր կտոր փխրիլ սկսած էին . . . Այդ չիրմին այցելելու, ոչ երէկ, ոչ առջի օրը եւ ոչ ալ թերեւս ամբողջ տարին մարդ չեկած ըլլալուն ակնյայտութեան առջեւ, անբացատրելի գլխաթեմամբ մը, հոգին համակուեցաւ անարգուած բարեկամին, խաբուած ամուսինին հանդէպ Այն բոլոր հարցումներուն որոնցմով քիչ առաջ իր սիրտը չարչիկեր էր այնքան, մէկ վայրկեանի մէջ, յստակ պատասխանը պարզուեցաւ իր առջին : Այն ատեն հասկցաւ թէ, մեռելային հետ ինտո'ր կրնար վարուած ըլլար այդ կինը որ այս առաջին տարեգործին առիթով, այդ չիրմին վրայ երկու ծաղիկ բերելու չափ իսկ սիրտ չէր ունեցեր : Ութր տարուան մէջ առաջին անգամը ըլլալով իր կոկիծին կծուութիւնը մեղմացաւ : Իր մէջը բարախեց անհունապէս խանդակաթ լսան մը, բարեզգիծութիւն մը՝ հանդէպ անոր որ իրեն այնքան չարիք պատճառելէն ետքը, ինքն ալ իր կարգին նոյնչափ տառապել էր եւ միեւնոյն էակին ձեռքովը : Ատոր համար էր ուրեմն, Միշէլին այդ գլխաթեմանը ներշնչելու եւ թե-

րեւս ներումին արժանանալու համար էր որ, իր նախկին բարեկամը ուզեր էր հոգ հանգչիլ, անանկ տեղ մը՝ ուր աղիկ գիտէր ինքնոր, միւսը պիտի չի կրնար չի գալ . . .

Բանի մը վայրկեան ետքը, հայր Պօնէ որ աշունի միջնելու վրայ եղող կապուտակ այդ միջօրեաքին, իր հսկողի պտոյտը կը շարունակէր, սարսափով նշմարեց այն միեւնոյն շրջագայողը, որուն՝ միմիայն Պէրիօնի չիրմին յիշատակութեան վրայ, հապշտապ խուճապը այնքան չփոթեցուցեր էր զինքը, — որ կուլա՛ր, կուլար, այդ չիրմին վրայ, քաղցրանուշ, բուրու մնաւէտ, թարմածիլ վարդեր նետելով բազկալիք . . .

Թարգմ. Օ. Զ.-Ս.

ԲՕԼ ՊՈՒՐԺԷ

ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ՇԱՐԱՐԸ

Շարթուս սկիզբը, օրաթերթերու Ազգ. Բրոնիկի բաժինը մեծ մասով նուիրուած էր հարսանեկան հանդէսներու նկարագրութեանց : Նշանախօսութեանց ցուցակէն, զոր Պատրիարքարանը սկսած է կանոնաւորապէս հրատարակութեան յանձնել, կ'երեւար արդէն թէ Ս. Սարգիսի տօնին կատարուելիք պատկազրութիւնները սովորականէն աւելի բազմաթիւ էին, եւ Ազգին ամէն դասակարգերուն մէջ, մեծահարուստ ընտանիքներէն մինչեւ էսնաֆ ու աղքատիկ ընտանիքները, խնամութիւններ կը հաստատուէին, այնպէս որ եօթնեակը որ վերջացաւ՝ կրնանք կոչել «հարսանեկան շաքաթը» : Եւ արդարեւ, երկուշաբթի օրը մայրաքաղաքիս բոլոր հայ եկեղեցիներուն մէջ, պատիւներն իրարու յաջորդեցին : Մանաւանդ Բերա, Գում-Գաբու, Սկիւտար եւ Գառնիւղ առաւօտէն սկսելով, հարսանեկան թափօրներ զուարթ ոգեւորութիւն մը առաջ կը բերէին՝ իւրաքանչիւրը իրեն համար որոշուած ժամին ուղղուելով դէպի տաճար : Ծաղկեփունջերու առատուած թիւն ամէն կողմ, նուազածութիւններ՝ տեղ տեղ, հրաւիրեալներու երթեւեկը ու գեղե-

ցիկ սեռին արդուզարդը՝ կը յատկանիշէին այս ընտանեկան հանդէսները :

§ Նախորդ չարթուն կանխեցինք արդէն մեր խնդակցութիւններն ու շնորհաւորութիւնները՝ Քայսէրլեան-Յակօբեան հարստեիքին առթիւ, որ չքեղ կերպով կատարուեցաւ, համակրական ընդհանուր արտայայտութիւններու մէջտեղ, նոյնքան ուղղուած հարսին ու անոր ծնողաց՝ Տէր եւ Տիկին Միքայէլ էֆ. Յակօբեանի, որքան փեսին՝ Սիմօն էֆ. Քայսէրլեանի : Ս. Պատրիարք Հայրը անձամբ նախագահեց պսակի արարողութեան, Բերայի Ս. Երբորդութիւն եկեղեցիին մէջ, եւ պերճիմաստ քարոզ մը խօսեցաւ : Կնքահայրն էր «Խւնիօն»ի Բարիզի Տնօրէնը որ ընտանեկան սուգի պատճառաւ չկրնալով անձամբ Պոլիս գալ, փոխանորդաբար զրկած էր ընկերութեան առաջին քննիչ Պ. Բօթիէն : Ազգին բոլոր դասերը ու բոլոր ծանօթ ընտանիքները իրենց ներկայացուցիչները ունէին այս արարողութեան, հանդիսատեսներու երկսեռ բազմութենէ մը զատ որ լեցուած էր գաւիթներն ու վերնատունը : Եկեղեցական արարողութիւններէն ետքը, հարսն ու փեսան եւ հրաւիրեալները առաջնորդուեցան Սըլտանտիտի ընդունելութեան սրահը ուր, շնորհաւորութիւններէ ետքը, չքասեղանի մը շուրջը մեծարուեցան վայելչապէս : Յետոյ պարերն սկսան, որոնք տեւեցին մինչեւ իրիկուան ժամ 11 :

Նորապսակ Սիմօն էֆ. եւ Տիկին Երանուհի Քայսէրլեան երեքշաբթի առտուն կառախուսելով Բարիզ մեկնեցան, դէպ ի Հարուային Ֆրանսա ուղեւորութիւն մը կատարելու :

§ Երկուշաբթի օրը, գրեթէ միեւնոյն ժամուն, Գատըզիւզի Ս. Թագաւոր եկեղեցիին մէջ կատարուեցաւ Միհրան էֆ. Գալֆասեանի ամուսնութիւնը Օր. Եւզինէ Մանուկեանի հետ, նախագահութեամբ Տ. Գէորգ եպիսկ. Երէցեանի, որ գեղեցիկ յորդորական մը խօսեցաւ «Հզօր է սէր իբրեւ զմահ» բնաբանով, երկսեռ հրաւիրեալներու ընտելեալ բազմութիւն մը ներկայ էր արարողութեան, որմէ վերջը նորապսակ ամուսն ու բոլոր հարսնեւորները առաջնորդուեցան Մանուկեանց բնա-

կարանը ուր ճոխ չքասեղանի մը շուրջ բաժակաճառեր արտասանուեցան եւ բարեմարթութիւններ կղան, որոնց կը միացնենք մեր ալ շնորհաւորութիւնները՝ երկու կողմին՝ եւ մասնաւորապէս Մանուկեան Եղբարց — Բարսեղ, Տիգրան, Մկրտիչ եւ Վահրամ էֆէն, տիներուն — որոնք առեւտրական հրապարակ վրայ իրենց ունեցած պատուաւոր դիրքին կը միացնեն ոչ նուազ պատուաւոր անուն մը Ազգին մէջ, իրենց բարեսիրական ոգրասիրական զգացումներով :

ԶԵՄ ՄԱՌՆԱՔ

— օօօօ —

Դա՛ւրն յուշով արահեսին,

Ուր օրջեցար դուն ան օր,

Հոգւոյս խնդեր շուս կ'անհետին,

Յաւեր քողով նորանոր :

Յնորք մըն եր երբ անգիտակ,

Մըսիս վրայ անձկազին,

Զգացի ես նայուածքիդ ճակ

Ծայր սիրոյ սլաֆին :

Անճուշ մըն եր, այո՛, պատիւ

Այդ նայուածք սեւեռուն .

Կ'այրիմ, սակայն չեմ գանգատիր

Հուրեմ աչքիդ սեւերուն :

Կը քուչքսիմ լսօ՛լ, անձանձիր,

Լռիկ սիրոյդ շուրջ դեռ ես .

Կը քրքրուայ տեղ մը ցանցիր

Իմ դողդոջուն շուրթերէս :

Գիտեմ մահուան ցուրտ հովը կայ

Կեանքիմ մէջ քոյլ ու նիհար,

Սակայն հոգիս, սիրոյս վրկայ,

Պայծառ շող մը ունի յար :

Մարի՛ գուցէ մի օր այդ շող

Իմ յուսախաբ լանջիս ճակ,

Բայց չեմ մոռնար հոգիս մաշող

Այս նայուածք ջիւնջ, յսակ :

Յ.

Արտօնատէր Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ

Տպագրութիւն Ե. ՄԱՏՐԷՆՍԵԱՆ

Ե. Պոլիս, Ֆինճանճըլար եօզուշու, Թիւ 27

ԳՈՂԱՐԵՂԻՆԱՅ ԵՒ ԱՐԾԱԹԵՂԻՆԱՅ
ՎԱՃԱՌԱՏՈՒՆ. — Ալիքսան Մ. Պարսիզպան-
եան Ոսկերչական Վաճառատունը (Պոլիս ,
Ոսկերչաց Շուկայ , թիւ 13) որ երկար տա-
րիներէ ի վեր կը գործէ ճշգրտութեամբ եւ յա-
ջողութեամբ , եւ որուն գործածած ոսկին ու-
աղամանդները տառջին տեսակէ ըլլալէ զատ ,
արհեստագիտական պատրաստութիւնն այ-
լիստ ճաշակաւոր է , եւ այս տեսակէտներով
միշտ գոհ թողուցած է իր բազմաթիւ յաճա-
խորդները , այս անգամ բոլորովին նոր գրու-
թիւն մը հնարած է , — յոյժ զիւրամտաշելի
գիններով իր ծախած ապրանքները , ի հար-
կին , 100ին 10 զեղչով ետ առնել յաճախոր-
դէն եւ դրամը վճարել : Կ'արժէ այցելել յիշ-
եալ Վաճառատունը , եւ աչքէ անցընել անոր
ոսկերչական ցուցադրութիւնները , այս կարգի
որ եւ է գնում ընելէ առաջ :

Ղալաթիա-Վոյլոտա փողոց թիւ 85 , Մ.
Տէր Դաւթեան շապիկի վաճառատունը նոր
եղանակի առթիւ կարեւոր ապագրանքներ
տուած ըլլալով՝ որոշած է այժմու մթերքը
100ին 25 իրական զեղչով ծախել : Ուստի
կը հրաւիրուի յարգոյ հասարակութիւնը որ
օգտուի այս էապէս ճշգրիտ լիքիտասիոնէն ,
որ մէկ ամիս պիտի տեսէ : Լիքիտասիոնի
ապրանքներն են շապիկ , օճիք , թեւոց ,
փողկապ , գուլպայ , թաշկինակ , կոճակ ,
եւն , Տէր Դաւթեան վաճառատունը իր ծա-
խած ապրանքներուն տոկունութեամբ ու
ճաշկովը արդէն հանրածանօթ ըլլալով , կը
յանձնարարենք որ մեր ընթերցողները օգ-
տուին այս իրական առիթէն :

ԻՒՆԻՕՆ

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆԱՅ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻՉ 1828-1829

ՀՐԴԵՀԻ ՃԻԻՂ

Մինչեւ 1899ի վերջը հատուցեալ փեսք	240,000,000 Քր.
1899ին գանձուած ապահովագին	19,500,000 »
Գրամապուրիս եւ պահեստ	105,000,000 »
Ապահովագրեալ գրամագուրիս	18,000,000,000 »

ԿԵՆԱՅ ՃԻԻՂ

Մինչեւ 1889ի վերջը հատուցեալ փեսք	99,000,000 Քր.
Ընթացիկ ապահովագրութիւնք	253,000,000 »
Գրամագուրիս եւ պահեստք	150,000,000 »

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ
«Իւնիօն»ի ապահովագրեցող կ'ընծայէ հսկայ երաշխաւորութիւն մը ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ
ԿԱՐԵԼԻ ԶԷ ԳՏՆԵԼ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՋ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ Է ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց զեղչեալ գիներով : Նպատաւոր պայ-
մաններ անհամեմատ կերպով աւելի գերազանց քան ուրիշ որ եւ է ընկերութեան
պայմանները : Շահաբաժիններու տարուէ տարի անմիջական վճարում , որով Իւնիօնի
ապահովագրուողը ՉԵՐԾ են այն վնասներէն եւ յուսախաբութիւններէն , որոնց կ'են-
թարկուին միշտ այն անձինք , որ օտաւաբաժիններու բաւոյման (accumulation des
bénéfices) ՅՈՌԻ եւ ՎԼԱՍԱԿԱՐ դուրեամբ գործող ընկերութեանց կ'ապահովա-
գրուին :

Ընկերութեան գրամատունն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆԲԱՆ

Թուրքիոյ եւ Արեւելքի Տեօրեկոսթիւն

Կ. Պոլիս , Կալաթա , Թահեսպուրուն խան , Օսմ. Պանֆայիւն դիւանք

Գործակալութիւնք Թուրքիոյ գլխաւոր քաղաքաց մէջ

